ՀՀ ՆԳՆ ՄՀՎ ՄՀՊԾԻ բաժնի պետ՝
Գ. Խուդոյանին

**Հաշվետվություն**

**ՀՀ ՆԳՆ ՄՀՎ միջազգային համագործակցության պլանավորման և ծրագրերի իրականացման բաժնի փորձագետի կողմից 20.02.2026-20.08.2026թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ**

2026թ. փետրվարի 20-ից 2026թ. օգոստոսի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՀՎ միջազգային համագործակցության պլանավորման և ծրագրերի իրականացման բաժնի փորձագետ Լիանա Մինասյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Եվրոպական միության մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագրի (VLAP) իրականացման նպատակով ՀՀ կառավարության ճանապարհային քարտեզի նախագծի մշակման և ընթացիկ լրամշակման աշխատանքների իրականացում,
2. VLAP-ի հենանիշների կատարմանն ուղղված գործողությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, համակարգում և վերլուծություն,
3. VLAP-ի շրջանակներում համապատասխան ոլորտային հանդիպումների, քննարկումների և այլ առնչվող միջոցառումների կազմակերպման աշխատանքների իրականացում և մասնակցություն,
4. VLAP-ի իրականացման վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի կողմից ներկայացված՝ Հայաստանի առաջընթացի վերաբերյալ առաջին զեկույցում ներառված առաջարկությունների քարտեզագրման, դրանց կատարման ընթացքի մշտադիտարկման և ճանապարհային քարտեզի ընթացիկ լրամշակման աշխատանքների իրականացում,
5. VLAP-ի շրջանակներում իրականացվող միջոցառումների կատարման վերաբերյալ տեղեկանքների, հաշվետվությունների և առաջարկությունների նախապատրաստում,
6. VLAP-ի փորձագիտական աշխատանքային խմբում ներգրավված պետական մարմինների և ՀՀ ՆԳՆ համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ համագործակցության և տեղեկատվության փոխանակման ապահովում,
7. Ոլորտային հանդիպումների և քննարկումների վերաբերյալ արձանագրությունների կազմում և տրամադրում համապատասխան գերատեսչություններին ու շահագրգիռ

մարմիններին, ինչպես նաև հանդիպումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններից բխող գործողությունների կատարման ընթացքի մշտադիտարկում,

8. Մասնակցություն ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալի գլխավորած պատվիրակության՝ մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում Ռումինիա (ք. Բուխարեստ) կատարած ուսումնաճանաչողական այցի աշխատանքներին, հանդիպումների և աշխատանքային քննարկումների գործընթացին, ինչպես նաև դրանց ընթացքում հայերեն-անգլերեն-հայերեն ու ռումիներեն-հայերեն-ռումիներեն բանավոր թարգմանության իրականացում:

ՀՀ ՆԳՆ ՄՀՎ միջազգային համագործակցության պլանավորման և ծրագրերի իրականացման բաժնի փորձագետ՝

Լիանա Մինասյան «21» 08 2026թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները գնահատում եմ «———»

ՀՀ ՆԳՆ ՄՀՎ միջազգային համագործակցության պլանավորման և ծրագրերի իրականացման բաժնի պետ՝

Գ. Խուդոյան «———» «21» 08 2026թ.